

դարձեալ կարկեր էր այդ անզգամը, անոր կնիկը գլխէ հանելով: Ու այդ խմբակին մէջ անխուսափելի քանի մը մեծ մտավաճառներ, որոնք կենդանի մորթելու արհեստը շատ բնական կերպով մը կը փոխանակէին մարդ մորթելու սրբազնասուրբ պարտականութեան հետ: Իրաւ է, որ ջարդը ազգային ճարտարարուեստն է թուրքերուն: Բայց ամէն արհեստի համար անհրաժեշտ է նախակարապետը, որ կը գոյանայ վերը համառօտակի աչքէ անցած տիպարներէն: Կառավարութեան պաշտօնական կազմը, հեռուէն հովանաւոր, կը միջամտէր պաշտօնապէս այն ատեն միայն, երբ ընդդիմութեան փորձեր, զոհերուն կողմէ, ինքնապաշտպանութեան քանի մը հրացաններ զգալի ընէին այդ պէտքը: Այն ատեն մէնարէէն կը տրուէր կոչը: Ամբոխը կը խուժէր զինարանը, կը զինուէր ուզուած առատութեամբ, կատարելութեամբ, ու կը խուժէր հայ թաղերուն վրայ, սկսելով շուկայէն: Մնացեալը հոս չեմ պատմեր: Էտհէմ պէյը ընդդիմացեր էր շրջակայ գեղերու թախանձագին պնդումներուն, որոնք, իրենց խղճմտանքը ընդմիջտ խաղաղեցնելու համար առիթը գտեր էին չափազանց յարմար, մէկ հարուածով ընդմիջտ ու հետախաղաղ մաքրելու կեավուրին պիղծ, տանջող գոյութիւնը, որ հակառակ հոճային սուրբ հաւաստիքին եւ կառավարութեան ալ վաւերացումին՝ սահմանուած էր չքանալու (ո՛վ 1915ը: Դուն կայիր այդ մարդոց հոգիին մէջ տարիներ, չըսելու համար դարեր առաջ), բայց որ սիրտի դպող իրականութիւն էր միշտ, երբ իրենց արտերուն սահմաններուն վրայ, բոլորն ալ իրենց ու զաւկըներուն պակսող, այդ կեավուրները կը կենային լուռ, լալու անկարող ու կը ծածկէին իրենց դէմքը թաշկինակով...: Այդ գեղերու խուժանը վարող թշուառականը Պրուսայէն փախստական թոքախտաւոր արգուհալի^(*) հոն մնաց մինչեւ որ ձեւի մտան 1896ի գրգռութիւնները ու պետա-

(*) Արգուհալի - աղբսագիր խմբագրող բացօթեայ գրագիր: